

ԱՎՆԱՐԿՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական տոմարի ուսումնասիրությամբ թեկուզ զբաղվել են շատ բանասերներ, բայց և այնպես ավելորդ չենք համարում այստեղ նորից քննության առարկա դարձնել այդ կապակցությամբ մի քանի հարցեր, ճշտել մինչ մեզ բերված տվյալները և հարկ եղած դեպքում տալ նրանց մեր տեսակետով ավելի հավանական բացատրությունը և միաժամանակ ըստ հնարավորին կապակցել հայ ժողովրդի պատմության և նրա կուլտուրական զարգացման էտապների հետ:

Հնագույն դարերում այն հայ ժողովուրդը, օգտվել է լուսնային տիպի օրացույցով, այսինքն ժամանակի հաշիվը տարել է լուսնային ամիսներով և տարիներով: Դրա հետքերը պահպանվել են հետագա դարերում ապրող մի քանի հեղինակների հետ: Օրինակ, Մովսես Պորենացին իր պատմության մի քանի գլուխներում գործածում է, «նա սպասեց երկու լուսին» բառերը: Նույնը գտնում ենք մինչև անգամ 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացու «Տոմարագիտություն» աշխատության մեջ, որտեղ գրված 42-ում շատ կոնկրետ կերպով ասում է. «Այլ սկսեալ յԱգոստայ մինչև ի Մովսէս, զգարնանամուտն տարեմուտ անուանէին ամենայն տրդի և ամսոց անւանք ոչ զոյր, բայց միայն զատաղինն լուսինն զգարնան ատաղին լուսին անուանէին, եւ զկնի Բ-երորդ լուսին, եւ Գ-երորդ... մինչև ՅԺԺ-ան—երրորդն եւ զողջոֆն ամն աշախիսի անուամբ վարէին մինչև ի մուտն դարնանային: Եւ դարձեալ յատաղինն դարնանային»...

Արեմենյան Հարստության սկզբի շրջանում (5-րդ դ. մ. թ.), երբ հայ ժողո-

վուրդը նոր էր կազմակերպվում որպես ինքնուրույն ազգություն և երբ նրան պատկանող տերիտորիան ժամանակավորապես միացված էր իրանի հետ, հայերը պարսիկների, վրացիների, աղվանների և մի շարք այլ մերձարևելյան ժողովուրդների հետ մտնալիս են իրենց նախնական պրիմիտիվ լուսնային տոմար ավելի կատարելագործված տոմարական սխեմով եղիպտական տոմարով: Վերջինս կոչվում էր արեգակնային, որովհետև լուսնի փուլերի հետ կապ չուներ: Ըստ այդ տոմարական սխեմի տարին ընդունվում էր հասարակ 365 օրվա և բաղկացած էր 13 ամիսներից, որոնցից 12-ը իրար հաջադարձին և ունէին 30-ական օր, իսկ 13-ը բաղկացած էր միայն 5 օրից: Այսպիսով տարվա տեվոդությունը կարճ էր իսկական տեվոդությունից 0,2422 օրով կամ «ինչպես համարում էին մինչև նոր Գրիգորյան տոմարը, 0,25 օրով»: Ներկայումս այդ բացը մենք վերացնում ենք ավելացնելով յուրաքանչյուր 4-րդ տարվա վրա մեկ օր (նահանջ տարի), սակայն հնում մինչև Հուլիոս Կեսարը նահանջ տարվա գաղափարը մեզ հայտնի ձևով գործածության մեջ գոյություն չուներ և դրա հետևանքով նոր ընդունված տոմարական սխեմով հայկական նոր տարվա օրը, այսպես կոչված ամանորը, յուրաքանչյուր չորս տարին մի օրով առաջ էր ընկնում: Օրինակ՝ եթե 1944 թ. ամանորը լիներ օգոստոսի 11-ին, ապա 1948 թ. նա տեղի կունենար օգոստոսի 10-ին, 1952 թվին՝ օգոստոսի 9-ն և այսպես 1460 տարուց $365 \times 4 = 1460$ հետո նորից նա կվերագաճնար իր նախկին տեղը, ափսոսվին և ամսին: Հետևապես մեր

հաշվով նրանց 1461 տարին համասար է մեր 1460 տարվան, որովհետև $1460 \times 365 = 523,265$ օրվա: Ենթևում դրանից հին ժողովուրդները իրենց ժամանակի հաշվի սխալը ուզողում էին համարելով 1461-րդ տարին նահանջ տարի, և այդ տարին տարիներին հերթական համար չէր ունենում, Այդ 1461-րդ տարին անվանվում էր ապոկալիպտիկ տարի և նահանջից նահանջ տարի: 1461 տարվա չբնաճը Եգիպտոսում կոչվում էր սոտիսական չբնաճ: Սոտիս բառով նրանք անվանում էին ներկայիս Սիրիոս աստղին (հայկական Շնատող), իսկ հայերի մոտ այդ ժամանակաշրջանը կոչվում էր հայկական չբնաճ: Եգիպտոսում այդ ժամանակաշրջանի սկիզբը կապված էր Սուրիս-Սիրիոս աստղի հեղիակտիկ ծագման հետ, իսկ Հայաստանում Հայկ (Օրիոն) համաստեղության հեղիակտիկ ծագման հետ, որը տեղի էր ունենում, մեր տոմարով, օգոստոս ամսի 11-ին, միայն ապոկալիպտիկ տարում: Հայկական ձեռագիր մատենագրերի ուսումնասիրությունը մեզ բերեց այն եզրակացություն, որ հին հայկական տոմարի ապոկալիպտիկ տարի պիտի համարել 428 թվ. մեր դարաշրջանի հաշվով: Հնում հայ ժողովուրդի նոր տարվա օր հանդիսանում էր զարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 20—22-ը: Կատարելով եռադարձ հաշիվ զարնանային գիշերահավասարի օրից մինչ օգոստոսի 11-ը՝ և ընդունելով, որ յուրաքանչյուր չորս տարվա ընթացքում նոր տարվա օրը, լսա եգիպտական տոմարական սխառմի առաջ է խաղում մեկ օրով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ հին Հայաստանում նոր տոմարական սխառմը լուսնային սխառմի փոխարեն ընդունված է եղել 460 թվականին (մեր թ. ա.): այսինքն Աբեմենյան հարստության առաջին դարում:

Պարզ է մեզ համար, որ հայերը ինքնուրույն կերպով չեն ընդօրինակել եգիպտոսից: Մեր կարծիքով, երբ պարսիկներին հանդիպեց կաղմակերպել լայնածավալ պետություն, որում ընդգրկված էին համա-

բյա թե բոլոր մերձարևելյան պետությունները, նրանք կամա-սկամա պետք է ձգտեին բոլոր աստղաբանություններում կարգավորել ժամանակի հաշիվը, այսինքն մեզինքնին միատեսակ տոմարական սխառմ: Իրենք պարսիկները գտնվում էին կուլտուրական դարձացման բավականին ցածր աստիճանի վրա, սակայն նրանց իշխանության տակ էին գտնվում Բաբելոնը և Եգիպտոսը, որտեղ հատկապես աստղաբանությունը և դրա հետ կապված տոմարական հաշիվները լավ էին մշակված: Ուստի պարսիկները պիտի յուրացնեին կամ Բաբելոնի տոմարական սխառմը կամ Եգիպտոսի: Առաջինն իր կառուցվածքով շատ բարդ էր և դժվարամատչելի, իսկ երկրորդը՝ պարզ և դյուրին դործածության մեջ դնելու համար: Պարսիկները նախապատվություն տալով եգիպտական պարտադրում են բոլոր հրապարակ ժողովուրդներին ժամանակի հաշիվը տանել այդ ձևով: Եթե սկզբում դա բոլոր երկրներում կրում է պաշտոնական տոմարի բնույթ, ապա հետագայում, դարերի ընթացքում, յուրացվում է և ժողովրդի կողմից ու դառնում ժողովրդական: Բայց և այնպես ամեն մի աղբյուրում ընդունված տոմարական սխառմը համարեցնում է իր աղբյուրի պահանջներին՝ կապելով աղբյուրի իրականների հետ: Այսպես, մենք տեսանք, որ հայերի մոտ այդ սխառմը կոչվեց հայկական չբնաճ և կապվեց հայ ժողովուրդի առասպելական նախահոր անվան հետ: Այս տոմարական սխառմը Հայաստանում դործածության մեջ մնաց, ինչպես ասացինք, սկսած 460 թվականից (մ. թ.) մինչև 1317 թվականը, երբ հայ ժողովուրդը արդեն հարեբության մեջ էր Եվրոպայի հետ և նրա շահերը պահանջում էին անցնելու այնպիսի տոմարական սխառմի, որը ընդունված էր արևմտյան Եվրոպայի կուլտուրական ժողովուրդների կողմից, ուրիշ խոսքով այդ տոմարով հայերը ժամանակի հաշիվը կատարում էին մոտ 1800 տ. ($460 + 1317 = 1777$ տ.): Եղել է ձգտում այդ տոմարական սխառմը մի քանի անգամ փոխարինելու հույան տոմար-

բով, բայց դա չի հաջողվել: Պատճառը եղել է հետևյալը. երբ քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստան, եկեղեցին ձգտեց հին հայկական տոմարը, որն արդեն դարձել էր ժողովրդական, փոխարինել հուլյան տոմարով, որովհետև վերջինս բոլոր այդ ժամանակվա քրիստոնյա պետությունների տոմարական սխառնման էր և Նիկիայի ժողովից հետո բոլոր քրիստոնեական տները հաջվում ու տոնվում էին այդ տոմարով: Ինչպես հայտնի է, քրիստոնեական գլխավոր տոներ՝ զատիկը միշտ կատարվում է դարնանային լիալուսնի հետևյալ կյուրակի օրը, և հետևապես, անհրաժեշտ է նաև հաշվի առնել լուսնի փուլերը ու շաբաթվա օրերը. սակայն հին հայկական տոմարով շաբաթը, որպես ժամանակի միավոր, դոյուլթյուն չունեւր և հետևապես, եկեղեցին չէր կարող օգտվել հին հայկական տոմարի տվյալներով, նա ստիպված էր իր հաշիվները տանել հուլյան տոմարով: Կատարելով անհրաժեշտ հաշիվները հուլյան տոմարով հայ եկեղեցականները ըստիպված էին առաջին դարերում այդ վերածել հին հայկական ամիսների և հայտարարել ժողովրդին: Այդ աշխատանքը, ճիշտ է, հնարավոր էր, բայց մեծ ջանք էր պահանջում և պարզ է, որ եկեղեցին ցանկանում էր հին հայկական «հեթանոսական» տոմարի փոխարեն մտցնել «քրիստոնեական», հուլյան տոմարը, սակայն դա երկար դարեր չի հաջողվել: Հայաստանում քրիստոնեական կրոնն ընդունելու կապակցությամբ տոմարի տիպը փոխելը դարձել էր անհնարին, որովհետև դեպքերի բերմամբ երկրում տոմարական սխառնմը ծառայել է որպես քաղաքական հոսանքի պայքարի սիմվոլներից մեկը: Հայտնի է, որ Հայաստանում հին և միջին դարերում միշտ դոյուլթյուն է ունեցել երկու քաղաքական հոսանք ա) արևելյան-իրանական, որը ձգտել է Հայաստանի բախտը կապել իրանի պետության հետ և բ) արևմտյան-հելլենական (հետագայում բյուզանդական), որի նպատակը եղել է տրամադծորեն հակառակը՝ հայ ժողովրդի բախտը կապել արևմտյան պետությունների հետ: Եւ և՛ ի՛նչ հայկական տոմարը իր կառուցվածքով ու ծաղումով կապված է եղել իրանականի հետ, ապա եկեղեցու կողմից օգտագործվող հուլյան տոմարը ունեցել է արևմտյան ծագում: Քրիստոնեության մուտքը Հայաստան պիտի համարել արևմտյան օրինետացիայի հաղթանակ, որին ընդդիմանում էր արևելյանը: Ծնորհիվ այդ պայքարի հին հայկական տոմարական սխառնմը իր դոյուլթյունը պահպանեց երկրում մինչև 14 դարի սկիզբը:

Երբ դարում պաշտոնապես դործածություն մեջ մտավ «հայկական թվականը» (դարադուլիւր): Դա ընդունվեց 584 թվ. Դվինում կայացած 3-րդ եկեղեցական ժողովում, որտեղ որոշվեց տարիների հաշիվը՝ դարադուլիւր սկսել 552-ից, թեև Անդրեաս բյուզանդացու 200-ամյա աղյուսակները վերջանում էին 552-ի վերջին: Պիտի ասել, որ հայ մատենագրներում բերված պատճառաբանություններից ոչ մեկը բավարար և հիմնավորված համարել չի կարելի, որովհետև ճշգրիտ հաշվումները ապացուցում են, որ ամենից ճշմարիտը կլինեւր սկսել 554 թվականից:

Դվինի երրորդ ժողովում տոմարական հաշիվները կարգի բերելու հարցը հանձնված է եղել Դրակա ս. Կարապետի մայրավանքի առաջնորդ Անատան Տարոնեցուն, որը թեև շատ հմուտ էր տոմարական հաշիվների մեջ, բայց և այնպես թույլ էր տվել իրեն մի սխալ: Այդ սխալն այն է, որ նա տարիների շղթայից դուրս չի ձգել 428 թվականը, որն ըստ հին հայկական տոմարական սխառնմի հանդիսանում էր ապոկատաստազային կամ նահանջից—նահանջ տարի և հետևապես այդ տարին տարիների «հերթական համար» չպետք է ունենար: Այսպիսով մեկ տարվա սխալ առաջացել է Անդրեաս բյուզանդացու 200-ամյա աղյուսակների խկական վերջը չնշանակելու պատճառով և մեկ տարվա սխալ էլ առաջացել է 428-րդ տարին ցուցակների մեջ պահպանելու հետևանքով և որպես հայկա-

կան դարագլխի սկզբնատարի ընդունվել է 552-ը փոխարեն 554-ի:

Նկատի ունենալով միայն առաջին սը-
խալը և անտեսելով երկրորդ հայ պատմա-
գիրներից մի քանիսը, ինչպես Ստ. Ասողի-
կը, Կիրակոս Գանձակեցին և ուրիշները,
հայկական թվարկության սկիզբը համա-
րում են 553 թվականը. այս հանգամանքը
անուշադրության չպիտի մատենին ժամա-
նակի հայ պատմաբանները ժամանակա-
գրական հաշիվներ կատարելիս:

Դիմելի ժողովից հետո հայ մատենա-
գիրները և պատմաբանները իրենց ժամա-
նակագրական տվյալները տալիս են արդեն
ըստ հայկական թվարկության դարագլխի:
Մեր ուսումնասիրության հետևանքով ե-
կանք այն եզրակացության, որ մի շարք
բանասերների կարծիքները այն մասին, իբր
թե հայկական թվարկության հիմնադիր
պիտի համարել Անանիա Շիրակացուն (7-րդ
դար), կամ իբր թե հայ պատմագիրները
սկսել են տալ միայն 9-րդ, 10-րդ և 11-րդ
դարերից (տես «Հանդես ամսօրյա 1904 թ.
ն. 4 ապրիլ»), միանգամայն սխալ պիտի
համարվեն և զուրկ գիտական հիմունքից:

Անանիա Շիրակացին իր տոմարագի-
տական աշխատության Հի գլխում ասում
է. «Զի՞նչ է կալ մինչև ՅԼԴ ամն Յուս-
տինիանոսի կայսեր, եւ ՅԻԳ Պոստոլա պար-
տից... Վասն զի աստ եղև լրումն Մ—ամի
կարգացն Անդրէասայ, Ը ազգաց: Եւ անտի
այսր է թուական մեր ալլուստ... ոմանք
նոյն թուականաւն Անդրէասի գրութեամբն
և ոմանք յաւելին կամ պակսեցին: Արդ՝
մերումս կարգեցան այն ամն թուական թեւ
այն ժողովեցան մինչև ցայս ամս»: Հուս-
տինիանոս կայսրի ժամանակն է 527—565
թ. թ.: Հետևապես նրա կայսրության 84-րդ
ամը հհանդիպի 561 թվակ. և քանի որ այդ
թվականը համարվել է հայկական 10-րդ
տարին, պարզ է, որ Անանիա Շիրակացին
ընդունում է հայկական թվարկության ըս-
կիզբ 551-ից սկսած: Ի՞նչպես կարող էր
Անանիա Շիրակացին հայկական թվականի
հիմնադիրը լինել, երբ նա ինքն է գրում,
թե հայկական թվականը սահմանվել է

552-ից, իսկ ինքը ծնվել է 7-րդ դարի ա-
ռաջին կեսերին: Երևի այդ թյուրիմացու-
թյունը պետք է բացատրել այն հանգա-
մանքով, որ բանասերները չիտթել են այն,
որ Անանիա Շիրակացին պատրիարք Աթա-
նասի հանձնարարությամբ պատրաստել էր
նոր տոմարական աղյուսակներ, ինչպես
գրում են մատենագիրները. «Անանիա կար-
դեաց զքրոնիկոնն հրաշաղան. յորում դո-
մարս մեր կարգեաց անշարժ»: Բայց պետք
է ասել, որ Շիրակացու կատարած այդ աշ-
խատանքից մեզ ոչ մի պատասխան չի հասել,
իսկ նրա աշխատանքի ճշգրտության մասին
ներկայումս ոչինչ ասել հնարավոր չէ:

Այդ ժամանակաշրջանում 6—11-րդ դա-
րերում հայերը օգտագործում էին Անաս-
տասի աղյուսակները, որոնք դործածական
էին ամենուրեք Հայաստանում: Տոմարա-
կան ճշգրիտ աղյուսակներ կազմվեցին մի-
այն 11-րդ դարի վերջերին Հովհաննես
Սարկավազ Սոփեստոսի ձեռքով: Սոփես-
տոսին հաջողվեց միաժամանակ փոքրիկ
բարեփոխությամբ հին հայկական «չարժա-
կան» տոմարը վերածել «անշարժականի»
նահանջ տարիների դադափարը մտցնելու
միջոցով: Նա առաջարկեց հայկական տո-
մարի 13-րդ ամիսը՝ Աւելեացը (չորրորդ
տարին) ընդունել հավասար 6-օրյա 5-ի
փոխարեն: Նա տարիների հաջորդական
համարներից դուրս ձգեց նույնպես 428-րդ
թվականը և կարելի է համոզված կերպով
ասել, որ իրոք հայկական տոմարը կարգի
բերեց: Վերջին փոփոխությունից հետո,
որպես հետևանք, առաջ եկավ հայկական
վերագրիչների երկու սխառն:

Դժբախտաբար Հովհաննես Սարկավազի
տոմարը, որ կոչվում է «Սարկավազագիր
տոմար», ընդհանուրի կողմից ընդունելու
թյուն չգտավ, որովհետև Հովհաննես Սար-
կավազի առաջարկությունները չդրվեցին
որևէ հեղինակավոր ժողովի քննության ու
հավանության, ինչպես այդ ընդունված էր
հին Հայաստանի իրականության պայման-
ներում: Չնայած Հովհաննես Սոփեստոսի
առաջարկած տոմարական սխառնը հավա-
նություն էր գտել Գրիգոր Վկայասերի

կողմից և հրահանգվել էր օգտագործելու Հայաստանում, բայց և այնպես ճշգրիտ տոմարական սխալները գործածությունն ունեցավ միմիայն եկեղեցական ասպարիզում, իսկ Սուրենատոսի հակառակորդները չհասկանալով նրա աշխատության խորը իմաստը և հին հայկական տոմարի հիմնական գրաբնիկությունը դեպի լավը՝ չօգտագործեցին սարկավադակի տոմարը և շարունակեցին պահպանել հինը։ Բացի այդ 1317 թվականին Աղանայի 44-րդ ժողովը նկատի ունենալով այն հանգամանքը, որ հին հայկական տոմարով տարեկիցը (նավասարդի մեկը) համընկնում է հունվարի մեկին և որ հայերը գտնվում էին սերտ հարաբերության մեջ արևմտյան Եվրոպայի հետ (քանի որ հայկական պետության վերջին օջախը՝ Ռուբինյան իշխանությունը եկեղեցիկելով օտար հարձակումների քայքայվել էր և մոտեցել իր վախճանին), որոշեց հրաժարվել հին հայկական տոմարից և ընդունել հուլյան տոմարը։

Սակայն այդ որոշումը իսպառ գործածությունից չվերացրեց հին հայկական տոմարը։ Երբ 1615 թվականին ավարտվեցին Հովհաննես Սուրենատոսի կազմած տոմարական աղյուսակները, այն ժամանակ Աղաբեկ Զուղայեցին նոր Զուղայում հանդես եկավ իր կազմած տոմարական աղյուսակներով, որոնք գործածության մեջ պիտի դրվեին սկսած 1616 թվականից։ Զուղայեցին չէր ընդօրինակել Հովհաննես սուրենատոսի տոմարը, բայց նա աշխատել էր սուրենատոսի որոշ սկզբունքներն օգտագործել։ Զուղայեցին նահանջ տարվա դադափարը պահպանելու նպատակով ամիսներից մեկին ապրիլ է 31 օր փոխարեն 30-ի, բացի այդ, նախատարվի մեկը՝ նոր տարվա օրը օգտատոսի 11-ից տեղափոխում է և դնում մարտի 22-ին, դարձնանային գիշերահավասարի օրին։ Աղաբեկայի վերականգնված տոմարի

գործածության տևողությունը շատ կարճ եղավ, որովհետև նա աչքաթուղ էր արել երկու գլխավոր հանգամանք նախ, որ տոմարական սխալները կապված է տվյալ պետության քաղաքական և անտեսական կյանքի հետ և դրա հետևանքով ամեն մի գյուղում կամ դավառում սեփական տոմարական սխալներ գործածել չի կարելի, և երկրորդ՝ նրա գրաբնիկությունները ոչ օգի կողմից հավանություն չէին դառն, բացի Զուղայի բնակչությունից։

Նույն փորձը, վերադարձ դեպի նախկին տոմարական սխալներ, վերջին անգամ կատարում է Միմեոն կաթողիկոս Երեմյանցին 18-րդ դարի վերջերին։ Նա աշխատանքը նախապատրաստում է լուրջ կերպով, ամբողջությամբ պահպանելով հին հայկական տոմարի սարուկտուրան։ Նրան հաջողվում է տոմարի մեջ մտցնել նաև նահանջ տարվա դադափարը։ Բայց նրա առաջարկած տոմարն էլ երկար տևողություն չունեցավ։ Պատճառը ոչ թե տոմարական սխալները կամ սխալմաների թերություններն էին, այլ այն, որ հայ ժողովուրդը արդեն կապված էր հուլյան տոմար գործածող ժողովուրդների հետ և իրականում անհնարին էր դարձել դեկավարվել ընդհանուրի կողմից հավանություն չգտած տոմարական սխալներով։

Ավելորդ չենք համարում կրկնել, որ Միմեոն Երեմյանցու կամ Հովհաննես սուրենատոսի տոմարական սխալմաները ավելի պարզ են իրենց կառուցվածքով, ավելի գիտականորեն հիմնավորված և ավելի հաջող գործածության համար քան ժամանակակից գործածական հուլյան ու նրան փոխարինող Գրիգորյան տոմարական սխալմաները։ Վերջինիս առավելությունը միայն այն է, որ նա արևմտյան ժողովուրդների տոմարն է, թեկուզ և շատ անհարմար։